տիճան տիրել էր ինձ, որ վախենում էի վերկենալ եւ նրա ետեւից նայել, թէ ո՞ւր է գնում: Ի՞նչ էր այդ, երա՞զ էր, տեսի՞լք էր, թէ գրգռուած երեւակայութեան ցնորք: Ես մնացի անշարժ դրութեան մէջ: Կարծես ինձ ամուր կապերով կաշկանդել էին իմ անկողնի մէջ, եւ շարժուել չէի կարողանում: Կարծես «ղարանէ անցաւ իմ վրայով եւ իր բոլոր ծանրութեամբ ճնշեց ինձ:

Կէս ժամ հազիւ անցած կը լինէր, երբ կրկին յայտնուեցաւ ուրոականը: Նա կամաց-կամաց մօտեցաւ, վեր բարձրացաւ սրահի սանդուղքներից, նախ մի շրջան գործեց նրա պատերի մօտով, այս կողմ ու այն կողմ նայելով, որպէս թէ մի բան որոնում էր, յետոյ կանգ առեց, սկսեց նայել անկողինների վրայ: Նրա աչքերը վառւում էին, դէմքը նոյնպէս գունաթափ էր, որպէս առաջ:

— Դուք, պարոն բժշկապետ, — ասաց նա, մօտենալով եւ կանգնելով իմ բարձի մօտ, — չհասկացաք իմ հիւանդութիւնը եւ հասկանալ չէիք կարող, որովհետեւ ես բոլորը չպատմեցի ձեզ...

Իմ երկիւղը փոքր-ինչ փարատուեցաւ. դա նաւավարի կինն էր եւ ինձ Ասլանի տեղն էր ընդունում:

— Ես բոլորովին հիւանդ չեմ, պարոն բժշկապետ, — շարունակեց նա աւելի տխուր ձայնով, — ես շատ առողջ եմ, պարոն բժշկապետ, լաւ ուտում եմ, լաւ խմում եմ, կարող եմ լաւ ման գալ, եթէ ինձ թոյլ տան տանից դուրս գալ...

Նա ակնարկում էր իր ամուսնի վրայ, որ նրան արգելարանի մէջ էր պահում: Ես յիշեցի Քոթոթի խօսքերը: Նա նստեց իմ բարձի մօտ, գլուխը խոնարհեցրեց ծնկների վրայ, ձեռքով բռնեց աչքերը եւ մի քանի վայրկեան լուռ մնաց: Գլխի ծամերը խառն հոսանքով ծածկեցին նրա դէմքը: Այդ միջոցին նմանւում էր նա մի սգաւորի, որ, իր սիրելիի գերեզմանի մօտ ծունկ իջած, լուռ ողբում է նրա ցաւալի կորուստը: Յետոյ նա գլուխը վեր բարձրացրեց, սոսկալով նայեց դէպի սենեակի դուռը եւ բացագանչեց հեկեկանքով.

— Դուք նրան օգնեցէք, պարոն բժշկապետ, նրան... դեռ ուշ չէ, դեռ կարելի է օգնել...

Ես կրկին սկսեցի դողալ:

— Դուք չէ՞ք հաւատում, պարոն բժշկապետ, — շարունակեց նա, — շտապեցէ՛ք, կարելի է օգնել... դեռ մարմինը տաք է... ձեռքերը շարժում է... դեռ արիւնը չէ դադարել հոսելուց...

Նա դարձեալ գլուխը ցած թողեց ծնկների վրայ եւ երկու ձեռքով բռնեց աչքերը, կարծես զարհուրում էր մի սոսկալի տեսարանից եւ չէր կամենում